# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1223-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով, 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության 15.09.2026թ. թիվ Ե/3/2726-26 գրությունը՝ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում ինքնակամ շինություններ հայտնաբերելու վերաբերյալ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջների պահպանումը պարզելու նպատակով.

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում «Արա-Սուրեն» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Վարդանյանի կողմից թվով 7 հատ բետոնի հիմքի վրա դրված փայտե տնակների, թվով 2 հատ երկաթյա վագոն տնակների և թվով 6 հատ զրուցարանների ինքնակամ կառուցելու /տեղադրելու/ փաստի առթիվ հարուցել վարչական վարույթ և իրականացնել քննարկում 2026 թվականի սեպտեմբերի 28-ին ժամը 1200-ին ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի 125 հասցեում, Ճամբարակի համայնքապետարանի շենքում:
2. Հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել «Արա-Սուրեն» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Վարդանյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԴԱՄՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 18
ք. Ճամբարակ